ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **12/07/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Արշավիր Բայաթյանը, Կարեն Մանասերյանը, Եղիշե Նազարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Մարատ Շահբազյանը, Էմիլ Սարգսյանը, Արմեն Վարդանյանը, Վահե Վարդանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝
Հրաչյա Վարդանյանը, Հայկանուշ Ավագյան, Քրիստինե Պողոսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Հայկանուշ Ավագյանը

Լսեցին
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 12-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 12-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին

3) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի մասին

4) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեում վերաբաշխում կատարեու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

6) Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների աշխատակիցներին հերթական արձակուրդն օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

7) «Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության ուսումնադաստիարակչական աշխատանքները դադարեցնելու մասին:

8) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 125-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 136-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը.

1. Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին համաձայն հավելվածի,

2) Գետափ բնակավայրի բնակիչ Ատոմ Հովսեփյանի ընտանիքին 150 000 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որպես աջակցություն դստեր բուժման ծախսերի:

3) Գետափ բնակավայրի բնակիչ Անժելա Մկրտչյանի ընտանիքին 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, որպես աջակցություն որդու վիրահատության ծախսերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 2-րդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Լ/

Լսեցին
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

գործառնական դասակարգման 11.01.02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել 6 233 000 (վեց միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ և այն ավելացնել՝

1) 01.06.01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձորի համայնքային տնտեսություն ՀՈԱԿ-ին պլաֆոներ ձեռք բերելու համար, 4823 (պարտադիր վճարներ) հոդվածին՝ 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, պարտադիր վճարների համար 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին՝ 1 035 000 (մեկ միլիոն երեսունհինգ հազար) ոռոգման համակարգի կառուցման խողովակների ձեռք բերման համար,

2) 09.01.01 (նախադպրոցական կրթություն) ոլորտիտնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, մանկապարտեզներում հակահրդեհային համակարգի տեղադրման աշխատանքների ֆինանսավորման համար և 4511 (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին) հոդվածին՝ 398 000 (երեք հարյուր ինսունութ հազար) ՀՀ դրամ Վերնաշենի մանկապարտեզի խոհարարի օգնականի հաստիքի պահպանման համար:

3) 01.01.01 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածին 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակի վերանորոգման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տնտեսական ապրանքների ձեռք բերելու:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

Լսեցին
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1–ին հոդվածի պահանջների.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն NN 1-3 հավելվածների:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը՝ հստակ արտացոլում

են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

1. Թույլատրել Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող մանկապարտեզ ՀՈԱԿ-ների աշխատակիցներին՝ 2023-2024 թթ. հերթական արձակուրդն օգտագործել սկսած 2024 թվականի հուլիսի 22-ից՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված օրերի քանակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Լ/

Լսեցին
«ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի թիվ 95-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի արձանագրությունը.

1. Եղեգնաձոր քաղաքի Միկոյան փողոց թիվ 7 շենքում դադարեցնել «Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ » ՀՈԱԿ-ի ուսումնադաստիարակչական աշխատանքները մինչև նոր տարածքի մասով իրավունքի ձեռքբերումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 22-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Լսեցին

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 125-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով.

1 . Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 8-ի՝ «Հողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 125-Ա որոշման 1-ին կետը շարադրել ստորև բերված նոր խմբագրությամբ.

«1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Մովսես Սպրիդոնի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.391 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքից (անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 29082023-10-0011 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0309-0068) 0.10860 հա-ի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման փոխելու համար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

Լսեցին

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի՝ «2024 թվականի համար Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 136-Ա որոշմամբ հաստատված թիվ 13 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հայկանուշ Ավագյանը _____